

Ինը բալ սեյսմակայունությանը



Վարչապետը ծանոթացել է Սպիտակ քաղաքի բնակարանաշինության աշխատանքների ընթացքին

Երեկ վարչապետ Տիգրան Սարգսյանը մեկնել է Լոռու մարզի Սպիտակ քաղաք: Վարչապետին ուղեկցում էին ՀՀ քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանը եւ Լոռու մարզպետ Արամ Քոչարյանը:

Վարչապետը նախ այցելել է «Վարպետաց թաղամաս», որտեղ ծանոթացել է կառուցապատման աշխատանքների ընթացքին եւ որակին, այնուհետեւ խորհրդակցություն է անցկացրել Սպիտակի քաղաքապետարանում: Ինչպես հայտնեցին ՀՀ կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, կառավարության ղեկավարին ներկայացվել են աշխատանքներն ավարտին հասցնելու կոնկրետ ժամկետներ: Անդրադարձ է եղել 1988 թ. երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած շահառուներին բնակարանով ապահովման խնդիրներին: Խորհրդակցության ժամանակ անդրադարձ է եղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից նշված շինաշխատանքների թերությունների շտկման հարցերին:

Ոլորտի պատասխանատուները վստահեցրել են, որ, ըստ ժամանակացույցի, բոլոր թերությունները շտկվում են: Կառավարության ղեկավարը խոսել է «Վարպետաց թաղամասի» կառուցման մասին՝ նշելով, որ անհրաժեշտ է թաղամասի զարգացման բիզնես ծրագիր: Այն պատրաստելու հանձնարարականը տրվելու է ազգային մրցունակության խորհրդին եւ շահագրգիռ մարմիններին:

Տրվել են համապատասխան հանձնարարականներ շինարարական աշխատանքները լավագույնս կազմակերպելու եւ ժամանակին ավարտելու վերաբերյալ:

Ըստ «Արմենպրեսի», ինչպես լրագրողների հետ զրույցում նշեց Վարդան Վարդանյանը, Սպիտակում ներկայումս ընթացքի մեջ են 220 բնակարանների շինարարական աշխատանքները: Բնակարաններում իրականացվում են ներքին հարդարման, ինժեներական աշխատանքներ: Նախարարի հավաստմամբ՝ աշխատանքները գտնվում են համապատասխան մասնագետների ուշադրության կենտրոնում եւ արձանագրվելիք թերությունները ժամանակին հայտնաբերվում ու վերացվում են: «Մեզ համար կարեւոր է կառուցվող բնակարանների սեյսմակայունության ապահովումը, որը կազմում է 9 բալ», – ասաց Վ. Վարդանյանը: Բնակարանաշինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել հունիսի վերջին: Նախարարի խոսքով, բնակարանների սայիկները ներկրվելու են այլ երկրներից, ինչի արդյունքում տնտեսվելու է 300 մլն դրամ, իսկ դրանք կուղղվեն քաղաքի ենթակառուցվածքների զարգացմանը, դպրոցների, մանկապարտեզների կառուցմանը: Նշված 220 բնակարանները շահագործման հանձնելուց հետո Սպիտակում եւս 90 ընտանիքներ կմնան շահառուների թվում: Լոռու մարզում նախորդ տարի շահագործման է հանձնվել 170 բնակարան, նախատեսված է Սպիտակում հունիսից կառուցել եւս 80, հետագայում Լոռու մարզում՝ 550 բնակարան: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ աղետի գոտի կատարած նախորդ այցելության ժամանակ իրականացվող շինաշխատանքներում հայտնաբերվել էր թերություններ եւ տրվել լրացուցիչ հանձնարարականներ դրանք շտկելու համար: Դրանք վերաբերել էին բնակարանների տանիքների ամրացմանը, գազաֆիկացմանը եւ սանհագույցների տեղադրմանը, սայիկապատման աշխատանքներին: Շինարարական աշխատանքներն իրականացնող «Գլենդել Հիլզ» ընկերության տնօրեն Վահե Ավոյանի խոսքով, բնակարանների շինաշխատանքներն իրականացվում են որակապես բարձր մակարդակով:

«Հաշվի առնելով շինաշխատանքների մեծությունը, իհարկե, պետք է լինեին թերություններ, սակայն

դրանք վերացվել են, եւ խնդիրները լուծվել: Նախագահի հանձնարարականով դրանք շտկելուց բացի իրականացվել են նաեւ լրացուցիչ աշխատանքներ, բնակարաններում ջեռուցման համակարգերի, սալիկապատման, սանհանգույցների տեղադրման հետ կապված»,–ասաց Վ. Ալմոյանը: Նրա հավաստմամբ, ՀՀ կառավարության կողմից լրացուցիչ աշխատանքների կատարման համար հատկացվել են անհրաժեշտ միջոցները եւ այդ առումով ոչ մի խնդիր չկա: Վ. Վարդանյանի խոսքով, աղետի գոտում կառուցվող 3 հազար 300 բնակարաններում նախագահի հանձնարարականով իրականացվելիք լրացուցիչ աշխատանքների համար հատկացվել է 3 մլրդ դրամ: Նշված բնակարաններից 3 հազարը կառուցվում է Գյումրիում, 300–ը՝ Սպիտակում: